

45. Սոյն երեք պատուհանաձև բևեռագրերէն արտա-
շափ մը հեռու դէպի արևմուտք բերդի կուրծքին վրայ փո-
րուած այրի դրան (որուն հայեր մօկէ հէր կըսեն) արև-
մասկողմին վրայ 27 տող բևեռագրեր կայ հողէն դուրս,
մի մասն հող ծածկած է: Յողերու երկայնութիւն 1 կան-
գուն 3 քառորդ է:

46. Բերդին արևմտեան ծայր դէպի արևմուտք նա-
յող պարսպի մեծամեծ քարերու շարուածքին վրայ (Իսքես-
լայ կափուտի ըսուած դռնէն դուրս) 3 տեղ բևեռագիր
կայ. առաջնոյն վրայ 7 տող բևեռագիր կայ, տողերու եր-
կայնութիւն 1 կանգուն և կէս:

47. Առաջինէն քիչ մը հեռու նոյնչափ երկայնութեամբ
7 տող բևեռագիր.

48. Երրորդն նոյնպէս 7 տող և նոյնչափ երկայն.
ասոնցմէ մինն եղծեալ:

49. Քաղաքամէջ Թէրզիպաշեան Յարութիւն աղայի
փողոցի դռնէն դուրս բևեռագրերով բար մի կայ կիսով չափ
եղծուած:

50. Նոյն տան դռնէն ներս բակի մէջ ձգուած բևե-
ռագրերով բար մի կայ. առաջնոյն պէս եղծուած. սոյն քա-
րեր հին աճառ խանի աւերակներէն բերուած է որ քաղա-
քամէջ հին չարչնոցի բովն է:

«ՀԱՐԻԻՐԱՄԵԱԿ ՆՈՐ ՆԱԽԻՋԵՒԱՆ ՔԱՂԱՔԻ»

Հանգուցեալ բաղմահմուտ մագիստրոս Տ. Գաբրիէլ
քահանայ Պատկանեանը թողած է մի ձեռագիր ընդար-
ձակ երկասիրութիւն «Հարիւրամեակ Նոր-Նախիջևան
քաղաքի» վերնագրով:

Այդ երկասիրութիւնը պարունակում է իւր մէջ Ան-
ւոյ և Նորա բնակիչների պալլթականութեան անցքերի
համառօտ նկարագիրը, Նոր-Նախիջևանի հիմնարկութեան
և Նորա հարիւրամեայ լիակատար և բաղմակողմանի պատ-
մութիւնը, խիստ հետաքրքրական և յոյժ կարևոր ման-
րամանութիւններով, Նոր-Նախիջևանի այժմեան հայ բը-

նախաց շատերի տոմսավորական նկարագիրներով և բազմաթիւ հետաքրքրական այլ պատումներով ու յաւելուածներով, որոնք առնչութիւն ունին այդ ժողովրդի պատմութեան հետ:

Այդ մեծ գործի ինքնաձեռագիր օրինակը հանգուցեալ հեղինակը յանձնած է Գ. Պօլսի Բերայի աւագերէց շնորհադարձ Տ. Յովհաննէս աւագ քահանայ Մկրեանին, որը իւր կողմից բարեհաճել է թոյլատրել մեզ հրատարակութեան տալու:

Արդ՝ ի նկատի ունենալով այդ ընդարձակ երկի կարեորութիւնը ժամանակակից պատմութեան համար՝ մենք կարծում ենք, որ կգտնուին նոր նախնականցիների մէջ անձինք, որոնք կցանկան լոյս ընծայել նորան: Ինչքան «Լուսնայի» գիրքով 1200 երեսներից կլինի բաղկացած:

ՄՏՔԻ ԼՈՒՍԱՆԿԱՐԸ

Բեօնագենի գիւտին, ինչպէս իւրաքանչիւր մի նոր երեւոյթի կամ գիւտի, որ ընդլայնում է մարդու մասւոր հորիզոնը, անկարելի էր, որ չհետեւին մի շարք այլ գիւտեր: Այդ գիւտերի շարքին է պատկանում և մտքի լուսանկարը: Եթէ այն ամենը, ինչ որ այդ մասին հաղորդում են, իրականանան, ապա այդ կարելի է համարել ծիւ դարու ամենամեծ գիւտը:

Ամերիկայի «Asteral Comera Club»-ի անդամները, որոնք իրենց նպատակ են դրել մասնաւորապէս լուսանկարչութեան օգնութեամբ նորանոր գիտական երեւոյթներ յայտնագործելը, Բեօնագենի գիւտը փորձելուց յետոյ, մի շարք փորձեր արին նոյն ճառագայթների օգնութեամբ Լոնդոնի ուսուցչապետ Չենգլիս Բոջերսի յայտնութիւնը ստուգելու, այն է թէ՛ Բեօնագենի ճառագայթներով կարելի է ոչ միայն մոլթ տեղերում պատկերի լուսանկար ստանալը, այլ և հնարաւոր է լուսանկարչական զգայուն թիթեղի վրայ ժողովել անտեսանելի ալիքներ և կամ եթերի այն շարժողութիւնները, որ ուղեկից պիտի լինին մարդկային մտքին:

Իսկապէս ասած, նոր չէ այն գաղափարը, որ մարդ-